**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ** 1

19.08.2020**թ. կնքված** N **«ՉՀ-ԱԴՊՈԱԿ-ԳՀԱՇՁԲ**-2020/1» **գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք. Չարենցավան <<29>>______09______ 2020թ.

ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի Մեսրոպ Մաշտոցի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Գ. Փանոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «ՄԵՆԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Ասլիկյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կապալառու» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 19.08.2020թ. կնքված N «ՉՀ-ԱԴՊՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-2020/1» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ, 8.6-րդ կետերը, «ՄԵՆԱՐՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 28.09.2020թ.-ին ներկայացրած գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. **ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

Կողմերը որոշեցին՝

1.1 19.08.2020թ. կնքված N «ՉՀ-ԱԴՊՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-2020/1» գնման պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները երկարաձգել և վերջնաժամկետ սահմանել մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ը:

2. **ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. **ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| | |
|---|---|
| **«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»** | **«ԿԱՊԱԼԱՌՈՒ»** |
| **ԿԳՄՍՆ «Չարենցավանի Մեսրոպ Մաշտոցի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ, ք. Չարենցավան** | **«ՄԵՆԱՐՇԻՆ» ՍՊԸ** |
| **Քոչարի փողոց թիվ 50** | **ՀՀ Լոռու մարզ, Գուգարք 1փ. 1 շ. 16** |
| **ՀՀ ՖՆ ԳՎ** | **<<Ինեկոբանկ>> ՓԲԸ** |
| **Հ/Հ** 900138000014 | **Հ/Հ** 2050222166211001 |
| **ՀՎՀՀ** 02804126 | **ՀՎՀՀ** 06959476 |
| | **Էլ. փոստ՝** narek.khachatryan2017@bk.ru |
| | **Հեռ.** 077-14-64-64 |
| **Տնօրեն Գ. Փանոսյան** | **Տնօրեն Ս. Ասլիկյան** |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| Կ.Տ | Կ.Տ |

«ՄԵՆԱՐՇԻՆ» «MENARSHIN» «МЕНАРШИН» 06959476